

ԴԱՍ 2.23. Ճապոնիա: Տնտեսությունը

• • •

Քանի որ Ճապոնիան աղքատ է հանքահումքային ռեսուրսներով, ապա արագ զարգացան քիչ հումքատար և քիչ էներգատար, գիտատար և աշխատատար արտադրությունները: Բայց վերջին տասնամյակներում բնակչության բնական աճի նվազման պատճառով անցում են կատարել քիչ աշխատատար արտադրություններին, որտեղ զգալի է ռոբոտների դերը:

• • •

Սև մետաղաձուլությունը զարգանում է ներկրվող հումքի և մետաղաձուլական վառելիքի (կոքսացող ածուխ) բազայի վրա և տեղաբաշխված է նավահանգիստներում: Դրանք կոչվում են արդյունաբերական-նավահանգստային քաղաքներ: Խոշոր կենտրոն է **Մուրորանը**: Գունավոր մետաղաձուլությունը արտադրում է ալյումին, գտված (մաքուր, ռաֆինացված) պղինձ և ցինկ, որոնց ձուլումը տեղաբաշխված է գունավոր մետաղների խտանյութ ներկրող նավահանգիստներում և ջրէկ-ների մոտ:

• • •

Քիմիական արդյունաբերությունը գերազանցապես զարգանում է նավթի բազայի վրա, ուստի տեղաբաշխված է նավթ ներկրող նավահանգիստներում: Թողարկում են հատկապես պոլիմերային նյութեր, քիմիական՝ սինթետիկ կաուչուկ, սինթետիկ մանրաթել, պլաստմասսա: Զարգացած է գիտատար փոքր քիմիան: Վերջին տասնամյակներում մեքենաշինական (հատկապես հավաքման) և քիմիական ձեռնարկությունների «վերաբնակեցում» է նկատվում, դրանք տեղաբաշխվում են Հարավարևելյան Ասիայի երկրներում (ինչու՞):

Թեթև արդյունաբերությունը հնագույն ճյուղ է, որը մասնագիտացել է բամբակյա և մետաքսյա գործվածքների արտադրությամբ:

Մանդի արդյունաբերության մեջ գերակշռում են ձկան պահածոների, **սակե** (բրնձօղի) ալկոհոլային խմիչքի արտադրությունները:

• • •

Գյուղատնտեսության մեջ փոքր է անասնապահության դերը: Գլխավորը ձկնաբուծությունն է, ձկան միսը բրնձից հետո ճապոնացու սննդաբաժնում երկրորդն է: Դա է պատճառը, որ Ճապոնիան ձուկ և ձկնամթերք է ներկրում: Վերջին տասնամյակներում առափնյա ծանծաղ ջրերում զարգացել է աքվակուլտուրան: Զարգացած են նաև թռչնաբուծությունը, մարալաբուծությունը:

• • •

Արդյունաբերությունը զարգացել է առաջավոր տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ, արտադրանքի որակի և արտադրական մշակույթի բարձրացման ուղիով: Ճապոնական ապրանքները մեծ պահանջարկ ունեն աշխարհում: Բազմաձյուղ արդյունաբերությունը հիմնված է տեղական ջրային ռեսուրսների ու ածխի, ներկրվող բնական գազի և ռադիոակտիվ հումքի բազայի վրա աշխատող էլեկտրաէներգետիկայի վրա:

• • •

Այն աջակցություն է ստանում պետության կողմից և ունի բարձր արտադրողականություն: Բավարարում է բնակչության՝ պարենի պահանջարկի կեսից ավելին: Գյուղատնտեսության գլխավոր ձյուղը **ինտենսիվ բուսաբուծությունն է**, իսկ բուսաբուծության գլխավոր ձյուղը՝ **բրնձի մշակությունը**: Համախառն բերքը բավարարում է բնակչության պահանջարկը: Գյուղատնտեսական հանդակները զբաղեցնում են երկրի տարածքի մոտ 1/8-ը:

• • •

Միայն 19-րդ դարի երկրորդ կեսից պետությունը ներդրեց գիտության, տեխնիկայի, տեխնոլոգիաների համաշխարհային նվաճումներ, ձեռնամուխ եղավ երկրի տնտեսական զարգացման ծրագրերի իրականացմանը: Բացվեցին նավահանգիստները, հրավիրվեցին բրիտանացի գիտնականներ, գործարարներ, բարձրորակ կադրեր:

• • •

Զարգացած են պտղաբուծությունը (բալ, ցիտրուսներ) և բանջարաբուծությունը: Ճապոնական Ռյուկյու կղզիներն աշխարհում փոքր բանանի արտահանման գլխավոր շրջաններից է: Աճեցնում են թեյի տասնյակ տեսակներ: Տեխնիկական մշակաբույսերից տարածված են սոյան, շաքարի ճակնդեղը, ծխախոտը: Զարգանում է ծաղկաբուծությունը: Ճապոնիան թթենու մշակության դասական երկրներից է, որի շնորհիվ զարգացած է շերամապահությունը:

• • •

Գերխոշոր (50 մլն և ավելի բրուտտո (նավերի տոննաժի հաշվարկման համար բրուտտո՝ բեռի կեղտոտ քաշը, նետոտ՝ մաքուր քաշը) ռեզիստրային տոննա արտաքին առևտրի շրջանառությամբ) նավահանգիստների թիվն անցնում է տասից: Դրանցից են **Տոկիոն, Կոբեն, Օսական, Կավասակին, Կիոտոն, Տիբուն, Մուրորանը:**

• • •

Կամրջաշինության և թունելաշինության շնորհիվ կրճատվել է քաղաքների միջև եղած հեռավորությունը: Նշանավոր են «Ակաշի Կայկո» ամենաերկարը՝ 4 կմ, «Ցունոշի մա Օհաշի», «Ցոկոհամա բեյ», «Կոտուշիմա Կայկո» կախովի կամուրջները: Զարգացման բարձր մակարդակի է հասել օդային տրանսպորտը: Երկրում հաշվվում է մեկ տասնյակից ավելի գերխոշոր օդանավակայան, որոնց տարեկան ուղևորաշրջանառությունն անցնում է 25մլն մարդուց: